ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կոռնիձոր բնակավայրի տարածքում՝ Արցախը մայր Հայաստանին կապող ճանապարհահատվածի կառուցման ժամանակ՝ երկաթյա գազատար խողովակաշարի և հենասալերի ապամոնտաժումից առաջացած խողովակների ու կցամասերի համակարգված կուտակման և համայնքի կարիքների համար ծառայեցնելու վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջան - 14.02.2023թ.-18.02.2023թ.

Արձանագրության օր՝ 18.02.2023թ.

ԿՈՒՏԱԿՄԱՆ Վայրը՝ գ.Տեղ, <ԿՍԲ> ՀՈԱԿ

ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 14-ի N 27-Ա որոշմամբ ստեղծված Տեղի համայնքային գույքագրման հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով) ղեկավարվելով գույքագրման հանձնաժողովների աշխատակարգի երկրորդ կետի դրույթներով՝ 2023 թվականի փետրվարի 18-ին ամփոփեց 2023թվականի փետրվարի 14-ից մինչև 2023թվականի փետրվարի 18-ն ընկած ժամանակահատվածում, Արցախը մայր Հայաստանին կապող ճանապահի կառուցման ժամանակ ՀՀ Կառավարության որոշմամբ՝ ապամոնտաժված երկաթյա գազատար խողովակների և հենասալերի համակարգված կուտակման և համայնքի կարքներին ծառայեցնելուն ուղղված, կատարված և ընթացիկ աշխատանքների արդյունքները:

Հանձնաժողովը արձանագրում է հետևյալը.

1. Արցախը մայր Հայաստանին կապող ճանապարհի կառուցման ժամանակ, ճանապարհի աջ մասում տեղակայված երկաթյա գազատար խողովակաշարի և հենասալերի ապամոնտաժումից՝ առաջացած խողովակներն ու կցամասերը, որպես համայնքային տիրազուրկ գույքի օգտագործումը՝ իրականացվել է Տեղ համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 14-ի N 26-Ա որոշման պահանջներին համապատասխան:
2. Համայնքային հանձնաժողովի կողմից կատարված դիտարկումների, ուսումնասիրությունների արդյունքում՝ արձանագրվել է, որ ապամոնտաժվել է ընդհամենը- 84 հատ հենասալ և 2850 մետր խողովակ:

3. Համայնքային գույքագրման հանձնաժողովի կողմից ներկայացված արձանագրությունները ներկայացնել Տեղ համայնքի ավագանու մոտակա նիստին, ավագանու հավանությունն ստանալու համար:
4. Ապամոնտաժված խողովակները և կցամասերը համակարգված կուտակվել են՝ Տեղի<ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ> ՀՈԱԿ-ՈՒՄ:

Համայնքային գույքագրման հանձնաժողովը առաջարկում է նշված աշխատանքների կատարման վերջնական արդյունքների և կուտակված խողովակների և կցամասերի՝ համայքի կարիքների համար օգտագործելու նպատակով Տեղ համայքի ավագանու կողմից հաստատվելուց հետո ևս հրավիրել հանձնաժողովի նիստ և կազմել կատարված աշխատանքների ավարտին վերաբերող ավարտական երկրորդ արձանագրությունը:

—2023 թվականի հունվարի 18-ի դրությամբ խողովակների և կցամասերի կենտրոնացման վայրում ՝ ընդհանուր հավաքագրվել է—<2850> մետր երկաթյա խողովակ և 84 հատ հենասալ:

Հանձնաժողովի նախագահ՝ Դ.Ղուլունց

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Միրզոյան

Հանձնաժողովի անդամ՝ Ս.Շիրինյան